ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 15 » հուլիս 2022թ. No 3083 - Ա

«ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Համաճարակաբանության, տրոպիկական հիվանդությունների և հիգիենայի ամբիոնի վարիչ՝ Արտավազդ Վանյանի 24.06.2022թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել 2022 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Համաճարակաբանության, տրոպիկական հիվանդությունների և հիգիենայի ամբիոնի կողմից կազմակերպվող «Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման ժամանակակից մոտեցումներ» թեմայով դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման ժամանակակից մոտեցումներ» թեմայով դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄՋ 41 տեսական և 19 գործնական կրեդիտ.

2) դասընթացավարներ Ռոմելլա Աբովյանին շնորհել ՇՄՋ 30 տեսական կրեդիտ, Նունե Քրիշչյանին՝ ՇՄՋ 11 տեսական և 19 գործնական կրեդիտ:

3. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
« 15 » հուլիս 2022թ.
N 3083 - Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

«ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ, ՀՎԿԱԿ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Համաճարակաբանության, տրոպիկական հիվանդությունների և հիգիենայի ամբիոն

Շաբաթ 1		
Օր 1		
3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կառուցվածքը	Ռոմելլա Աբովյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Դասախոսություն** Վարակի հսկողության ԱՀԿ 8 բաղադրիչները	Ռոմելլա Աբովյան
Օր 2		
3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների համաճարակաբանական հսկողությունը ՀՀ-ում	Ռոմելլա Աբովյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Դասախոսություն** Պարէնտերալ վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համաճարակաբանական հսկողության համակարգը ՀՀ-ում	Ռոմելլա Աբովյան
Օր 3		
3 ժամ	**Գործնական** Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների համաճարակաբանական հսկողությունը ՀՀ-ում (շարունակություն)	Նունե Քրիշչյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Դասախոսություն** Պարէնտերալ վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համաճարակաբանական հսկողության համակարգը ՀՀ-ում (շարունակություն)	Նունե Քրիշչյան
Օր 4		
3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների ստանդարտ բնորոշումները	Ռոմելլա Աբովյան
1 ժամ	Ընդմիջում	

3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների ստանդարտ բնորոշումները (շարունակություն)	Ռոմելլա Աբովյան
Օր 5		
3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական նշանակության իրերի ախտահանում, մանրէազերծում: Բժշկական արտադրատեսակի մանրէազերծման գործընթացի մաքրման փուլի գործունեության ընթացակարգը	Նունե Քրիշչյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Գործնական** Բժշկական նշանակության իրերի ախտահանում, մանրէազերծում: Բժշկական արտադրատեսակի մանրէազերծման գործընթացի մաքրման փուլի գործունեության ընթացակարգը (շարունակություն)	Նունե Քրիշչյան
Շաբաթ 2		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Թափոնների անվտանգ գործածություն	Նունե Քրիշչյան
1 ժամ	Ընդմիջում	
4 ժամ	**Գործնական** Թափոնների անվտանգ գործածություն	Նունե Քրիշչյան
Օր 2		
3 ժամ	**Դասախոսություն** Ձեռքերի լվացման միջազգային մոտեցում: Մանրէաբանական լաբորատոր հետազոտության նպատակով երակից արյան վերցման գործողությունների ստանդարտ ընթացակարգը	Նունե Քրիշչյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Գործնական** Ձեռքերի լվացման միջազգային մոտեցում: Մանրէաբանական լաբորատոր հետազոտության նպատակով երակից արյան վերցման գործողությունների ստանդարտ ընթացակարգը	Նունե Քրիշչյան
Օր 3		
3 ժամ	**Դասախոսություն** Ծայրամասային երակային կաթետերի տեղադրում և խնամք: Հետվիրահատական վերքերի կանխարգելում	Ռոմելլա Աբովյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Դասախոսություն** Անվտանգ ներարկումների իրականացում: Պացիենտի բերանի խոռոչի հիգիենիկ մշակման գործունեության ընթացակարգը	Ռոմելլա Աբովյան
Օր 4		
3 ժամ	**Գործնական** Ծայրամասային երակային կաթետերի տեղադրում և խնամք: Հետվիրահատական վերքերի կանխարգելում:	Նունե Քրիշչյան
1 ժամ	Ընդմիջում	

3 ժամ	**Գործնական** Անվտանգ ներարկումների իրականացում: Պացիենտի բերանի խոռոչի հիգիենիկ մշակման գործունեության ընթացակարգը	Նունե Քրիշչյան
Օր 5		
3 ժամ	**Դասախոսություն** Ախտահանիչ նյութերի շրջանառությունը ՀՀ-ում: Նախնական և պարբերական բժշկական զննությունների իրականացումը ՀՀ-ում	Ռոմելլա Աբովյան
1 ժամ	Ընդմիջում	
3 ժամ	**Դասախոսություն** Առանձին վարակիչ հիվանդների մեկուսացման ռեժիմներ:	Ռոմելլա Աբովյան

Թիրախային լսարան՝ բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10 հոգի: